Արձանագրություն N 4

«ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ի կարիքների համար հսկողական համակարգերի ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ՇՀԾՁԲ-15/9-02» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան «12» մայիսի 2016թ.
Ժամը՝ 10:00

Մասնակցում էին՝

հանձնաժողովի նախագահ՝

Կարեն Մելքոնյան՝ (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմի Պատասխանատու՝ ԳՊ/ԳԱՊ) ՀՀ Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար

հանձնաժողովի անդամներ՝

Կարեն Համբարձումյան՝ (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ) Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար

Սարգիս Արմենակյան՝ (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ) Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար

Արման Ղուկասյան՝ (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ) Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար

Խորեն Պետրոսյան՝ (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ) ՀՀ դատական դեպարտամենտի համակարգչային ծառայության մասնագետ

հանձնաժողովի քարտուղար՝

Արուս Խաչատրյան՝ (Գնման պատասխանատու /Մրցույթի համակարգող՝ ԳՊ/ՄԻՄ) ՀՀ դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման վարչության գնումների համակարգման բաժնի ավագ մասնագետ:

1. Տեղեկատվություն՝ «ԴԴ-ՇՀԾՁԲ-15/9-02» ծածկագրով ընթացակարգի ներկայացրած հայտերի բացման մասին.

Հայտերը բացվել են www.armeps.am կայքի՝ էլեկտրոնային ձևով գնումների իրականացումն ապահովող համակարգի /այսուհետ՝ Համակարգ/ միջոցով 2016թ.-ի մայիսի 12-ին, ժամը 10:00-ին:

2. Տեղեկատվություն՝ գնման առարկայի ընդհանուր գնի վերաբերյալ.

Ղեկավարվելով ՀՀ Կառավարության 2011թ. փետրվարի 10-ի թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի /այսուհետ՝ Կարգ/ 44-րդ կետի 1-ին ենթակետով՝ հանձնաժողովի նախագահը հրապարակեց գնման առարկայի ընդհանուր գինը՝ մեկ թվով արտահայտված.

Չափաբաժնի համարը	Չափաբաժնի անվանումը	Գինը /ՀՀ դրամ/
1	Անվտանգության տեսախցիկների վերանորոգման ծառայություններ	2 700 000
2	Անվտանգության դարպասների վերանորոգման ծառայություններ,	1 800 000
3	Դռների անվտանգության էլեկտրամագնիսական փականների վերանորոգման ծառայություններ	750 000
4	Անվտանգության համակարգի վերանորոգման ծառայություններ	600 000
5	Էլեկտրական պտուտակաձողի վերանորոգման ծառայություններ	214 200

3. Հայտեր են ներկայացրել հետևյալ մասնակիցները՝

Մասնակցի անվանումը (անունը)	Հասցեն, հեռախոսահամարը
«Էլիպս Ջիէյ» ԱՊԸ	ք. Երևան, Ն. Տիգրանյան 27, հեռ. (010)231520 (091)011619
«ՍԵԳ» ՍՊԸ	ք. Երևան, Սարկավագի փ. 72/2, հեռ. (077)660786

4. Համակարգում 02.05.2016թ.-ի դրությամբ գրանցված մնացած բոլոր հնարավոր մասնակիցները հայտեր չեն ներկայացրել:

5. Տվյալներ՝ բացված յուրաքանչյուր հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.

«Էլիպս Ջիէյ» ԱՊԸ-ի, «ՍԵԳ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

6. Տվյալներ՝ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած հայտի /հայտում առկա փաստաթղթերի/՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.

«Էլիպս Ջիէյ» ԱՊԸ-ի կողմից ներկայացված հայտը /հայտում առկա փաստաթղթերը/ կազմված է /են/ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան, բացառությամբ

ա) <<Մասնագիտական փորձառության մասին հայտարարության>> (Հավելված 3.1), որը թերի է կազմված,

բ) Գնի առաջարկին կից ներկայացված գնացուցակի, որում 3-րդ չափաբաժնի մասով առկա է թվաբանական անճշտություն:

Գնի առաջարկում (Հավելված 4) 2-րդ չափաբաժնի համար առաջարկված ընդհանուր գինը սյունակում առկա է անհամապատասխանություն տառերով և թվերով գրված գումարների միջև: Քանի որ ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 3-րդ մասով՝ հիմք է ընդունվում տառերով գրված գումարը՝ երեք միլիոն երեք հարյուր հիսունչորս, Գնի առաջարկին կից գնացուցակում անհրաժեշտ է կատարել համապատասխան ուղղում:

«ՍԵԳ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը /հայտում առկա փաստաթղթերը/ կազմված է /են/ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան, բացառությամբ <<Մասնագիտական փորձառության մասին հայտարարության>> (Հավելված 3.1), որը թերի է կազմված:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

7. Մասնակիցների առաջարկած գներն են՝

Չ/Հ	Չափաբաժնի անվանումը	«Էլլիպս ՋԻԷյ» ԱՊԸ					«ՍԵԳ» ՍՊԸ				
		Ինքնարժեք	Շահույթ	Առաջարկած գինը /առանց ԱԱՀ/	ԱԱՀ	Առաջարկած գինը /ներառյալ ԱԱՀ/	Ինքնարժեք	Շահույթ	Առաջարկած գինը /առանց ԱԱՀ/	ԱԱՀ	Առաջարկած գինը /ներառյալ ԱԱՀ/
1	Անվտանգության տեսախցիկների վերանորոգման ծառայություններ	3 047 250,0	537 750,0	3 585 000	717 000	4 302 000	2 230 000	420 000	2 650 000		2 650 000
2	Անվտանգության դարպասների վերանորոգման ծառայություններ	2 375 750,0	419 250,0	2 795 000	559 000	3 354 000*	1 449 000	297 000	1 746 000		1 746 000
3	Դռների անվտանգության էլեկտրամագնիսակա ն փականների վերանորոգման ծառայություններ	1 175 847,5	207 502,5	1 383 350	276 670	1 660 020	536 000	181 000	717 000		717 000
4	Անվտանգության համակարգի վերանորոգման ծառայություններ	398 820,0	70 380,0	469 200	93 840	563 040	876 000	259 000	1 135 000		1 135 000**
5	Էլեկտրական պտուտակաձողի վերանորոգման ծառայություններ	425 000,0	75 000,0	500 000	100 000	600 000	1 525 000	225 000	1 750 000		1 750 000

*«Էլլիպս ՋԻԷյ» ԱՊԸ-ի կողմից ներկայացված Գնի առաջարկում (Հավելված 4) 2-րդ չափաբաժնի համար առաջարկված ընդհանուր գինը պունակում առկա է անհամապատասխանություն տառերով և թվերով գրված գումարների միջև: Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 3-րդ մասով՝ հիմք է ընդունվում տառերով գրված գումարը՝ երեք միլիոն երեք հարյուր հիսունչորս:

** «ՍԵԳ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնի առաջարկում (Հավելված 4) 4-րդ չափաբաժնի համար առաջարկված ընդհանուր գինը պունակում առկա է անհամապատասխանություն տառերով և թվերով գրված գումարների միջև: Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 3-րդ մասով՝ հիմք ընդունելով տառերով գրված գումարները՝ հանձնաժողովը որոշեց մերժել 4-րդ չափաբաժնի գնի առաջարկը (ՀՀ Կառավարության 2011թ. փետրվարի 10-ի թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետ):

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովը որոշեց.

-հիմք ընդունելով Կարգի 45-րդ կետը՝ մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և հաջորդ նիստը հրավիրել 2016թ. մայիսի 16-ին, ժամը 12:00-ին:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովի քարտուղարին.

Հայտերում արձանագրված՝ հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանությունների մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնել մասնակիցներին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ Կարեն Մելքոնյան

Անդամներ՝ Կարեն Համբարձումյան

Սարգիս Արմենակյան

Արման Ղուկասյան

Քարտուղար՝ Խորեն Պետրոսյան

Արուս Խաչատրյան